№ 42 ԹԻՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐ 11 — 1895 — ԹԻՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐ 11 № 42

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

«ՇԱՒԻՂ» տարեկան գինը 10 ֆրանկ, կէս տարուանը 6 դրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 բուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 բուբլի։

Արտասահմանից փոդի համար պիտի դիմել հետևեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. բացի կիրակի և տօն օրերից։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱՑԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1896 ԹՒԻ

Գ. ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ“ Գ. ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Կը հրատարակվի Թէհրանում նոյն ուղղութեամբ և նոյն ծրագրով։ «Շաւիղի» բաժանորդագինն է Պարսկաստանի համար մէկ թուման. կէս տարուանը վեց դրան։ Արտասահմանի համար 3 բուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 բուբլի կամ 5 ֆրանկ։

Ռուսաստանից դրամական ծրարները պիտի ուղարկուեն անպատճառ հետևեալ հասցէով։ Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ, пер. А. Бекъ-Назарову. Խնդրվում է ուշք դարձնել ճիշտ այս հասցէով և առանց մի բառ մոռանալու ուղարկել դրամները, այլապէս չեն ընդունվիլ։ Եւրոպայից ուղարկել պէտք է փոխանակագրով կամ թղթադրամով. Հասցէն Եւրոպայի համար Téhéran, Redaction «CHAVIGH». այդ հասցէին պիտի լինի նաև Ռուսաստանից խմբագրութեան ուղղած թղթակցութիւնները։

Ապառիկ բաժանորդագրութիւն ոչ մի դէպքում չէ ընդունվում։

Պարսկաստանի համար հասցէն Redaction «CHAVIGH», Téhéran.

Խմբագրութիւնը ունի գործակալներ հետևեալ տեղերում։

Կովկասում.—Թիֆլիս՝ «Մուրճի» խմբագրութեան մէջ պ. Ց. Յակովբեան. պ. Խ. Արզումանեան։ Բաթում.—պ. պ. Դ. Դրիգորեան, Ստեփան Քէօսէեան։ Բագու—Տպարան «Արօր». Որդիք Բ. Արզումանեանք։ Բալախանի.—պ. Բալասի Ա. Դաբրիէլեան։ Կարս.—պ. Աբէլ Ապրեսեան։ Ջուլֆի.—պ. Թոմաս Մհերեան։ Սխալքալաք.—պ. Ջաւադ Ց. Գրիգորեան։ Օդեսսա.—պ. Որդիք Բ. Արզումանեանք։ Եւրոպա. Ռուսչուք.—պ. Փ. Հազլեան։ Պարսկաստանում.—Սալմաստ՝ պ. Ց. Ապրեսեան (Եղբայրք Ս. Արզումանեանք) Արդաբիլ՝ պ. Յակովբ Էլչիբէկեան։ Նոր-Ջուղայ՝ պ. Յովսէփ Բարսեղեան։ Բուշիր՝ Կ. Զէյթունեան։ Ռաշտ և Էնզէլի՝ պ. Ալէքսան Յովսէփեան։ Մարաղա՝ պ. Մելքոն Խալափեանց. Դավրէժ՝ Ընթերցասիրաց Գրադ. ընկ. խանութ

Գործակալ չեղած քաղաքներից բաժանորդագին կարելի է ուղարկել պարսկական նամակադրոշմներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասկանալի լեզուով խօսեցէք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Հայկական հարցի մասին. Մի պտոյտ Սպահանում. Նամակ Բուշերից. Նամակ Ռաշտից. Նամակ խմբագրութեան. Դրախօսութիւն. Ներքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ։

ՀԱՍԿԱՆԱԼԻ ԼԵԶՈՒՈՎ ԽՕՍԵՑԷՔ

—

Քանի հոգի է հասկանում մի այսպիսի լեզու։ ...«Ի չգտանել ուրուք իսկոյն զայս կատարեալ առաւելութիւն ձայնից, վերստին արկցին ձայնք զերկոցունց՝ որ զառաւելագոյն կալան ձայնս և դէպս այսպիսիս պարտ է երկոցուն նոցա, զորոց ձայն արկանի, չտալ զվարկ իւրեանց»...

Եւ սակայն ահա այդպիսի լեզուով է դեռ որ գրում են մեր սպահանցի, Հնդկաստանցի և Ջաւայի հայերը։ Դեռ դա քիչ կատարեալներից է. ինչ սոսկալի ոյժ պէտք է գլուխ հանելու համար այն լեզուից, որով սպահանցիք վարում են իրենց թղթակցութիւնները, գրում են կանոնագրութիւններ, հաշիւներ, նամակներ։ Որքան որ նրանց գոռում են թէ հասկանալի լեզուով խօսեցէք, անպատուութիւն և ամօթ են համարում աշխարհաբառ գրել, աշխարհաբառ սովորել։ Մեզ գալիս են թղթակցութիւններ, որոնց լեզուն մի այլանդակ խառնուրդ է կազմում աղաւաղած հայերենի, պարսկերէնի սխալահնչիւն և անգլերէնի այլանդակած բառերի։ Գոնէ մաքուր հայերէն, աւետարանի սիրուն գրաբառով գրէին... Պարծանք են համարում Մարտի փոխարէն Մարչ, և Օգոստոսի փոխարէն Աւգոստ գործածելու հետ՝ գրաբառ և աշխարհաբառ բառերի կոյտեր էլ անել, մթնացնել, մթնագոյն դարձնել մի ամենապարզ նախադասութիւն և կարծել թէ հայերէն են խօսում։

Ո՞րի համար է որ նրանք տպագրում են այդպիսի այլանդակ կամ հէնց նոյն իսկ ամենաբարձր գրաբառով գրուած գրքերն ու հաշիւները, կանոնագրութիւններն ու երբեմն էլ թերթեր լցնող բանաստեղծութիւնները։

Չէ՞ որ ընթերցող հասարակութիւնը ոչինչ չի հասկանում այդ տեսակ խառնուրդներից և չէ՞ որ նրանց է որ տրվում են այդ գրքերը։ Ի՞նչու զուտ աշխարհաբառ, Այրարատեան լեզուն չը գործածել, չը սովորեցնել մեր դրպրոցներում։ Լեզուն, ինչպէս և ամէն ինչ, ստեղծուած է մարդուս համար և եթէ նա փոփոխում է իր բարբառը այս կամ այն ձևի, տեսակի—դա նշանակում է որ կատարել է մի բնական ընափոխութիւն, որին դէմ դնելը անմտութիւն է։

«Լեզուն մի որևիցէ վարդապետութիւն չէ... ասում է Մ. Նալբանդեանը («Գաղափար» № 2), կարելի չէ լեզուն քարոզել. ուզես առ բոլոր ազգը և նստացուր աշտկերտական նստարանների վրայ, որ անկարելի է բան էլ դարձեալ աշխատանքդ անօգուտ կը լինի... Ամենայն շրջան ունի իր բնաւորութիւնը և նոյն կերպարանքը, նոյն բնաւորութիւնը կունենայ և նրա լեզուն. մեր հին լեզուի մէջ ասում ենք «գան ըմպել», իսկ նորի մէջ գանը չէ խմվում, այլ ուտվում է. ասում ենք ծեծ ուտել և ոչ թէ խմել»....

Ինչ որ հին լեզուի մէջ օրէնք էր, նա այժմ բնական կերպով կարող է անգործադրելի դառնալ։ Այդպէս է խօսողների պահանջը. ի զուր է այդ պահանջների դէմ դնել։ Ով, քանի՞ հոգի են այժմ որ ընդունակ են հասկանալու գրաբառ լեզուով գրուածքներ։ Ժողովուրդը, որին ես տրվում մամուլի տակից լոյս տեսնող գրուածքներ, չէ հասկանում ձեր գրաբառ, պապերի «նուիրական» կոչած լեզուն։ Չը կայ ոչինչ նուիրական, որ տեղի չը տայ մարդկային պահանջների առաջ։ Եթէ մեր պապերը գոհ կարող էին լինել մերկ մանգալով, այդ չէ նշանակում որ մենք էլ կարող ենք նոյնը անել։

Մի խօսքով ոչ սրանից 100 տարի առաջուայ օրէնքներով ու պահանջներով և ոչ էլ այդ ժամանակուայ լեզուով կարելի է գոհացնել այժմեան մարդկութիւնը։

Ի՞նչ կը հասկանար օրինակ մի իտալացի կամ ֆրանսացի, եթէ նրան մի լատիներէն կամ 17-րդ տարի ֆրանսերէնով նախադասութիւն ասէիք...

Անմտութիւն է պնդել մի լեզուի գործածութեան մէջ թողնելու վրայ, եթէ այդ լեզուն այլ ևս հասկանալի չէ մնում մեծամասնութեան, եթէ նրանով այլ ևս ոչ ոք չէ խօսում, ոչ ոք չէ թղթակցում։

Հասկանալի լեզուն, գործածական լեզուն սովորեցրէք ձեր մանուկներին. այնպիսի լեզուով գրեցէք որ ձեզ ժողովուրդը հասկանայ, որ ձեր հրատարակածները ժողովուրդը ըմբռնէ։ Պարծանք չէ գրաբառով, այն էլ մեր սպահանցի և հնդկահայ եղբայրների անճոռնի, այլանդակած գրաբառով գրել, այլ մինչև իսկ անմտութիւն է։ «Լեզուն ժամանակի արդիւնք է և ծաղկում է ժողովրդի հասկացողութեան և քաղաքակրթութեան համաձայն. վատ թէ լաւ—այդ ուրիշ խնդիր է, բայց իրողութիւնը այս է, որ այդ լեզուն, որպէս ժամանակի լեզու, ունի նոյն լիակատար և անժխտելի իրաւունքը, որ իր ժամանակին ունեցել է նախընթաց նահապետական լեզուն» (Մ. Նալբ. «Գաղափար» № 2)։

Այժմ հայ ժողովուրդը խօսում է աշխարհաբար. գրաբառը մի լեզու է, որ վաղուց պէտք էր դուրս ձգել գործածութիւնից, մինչև իսկ դուրս նետել եկեղեցիներից։ Մի լեզու է որին ժողովուրդը այլ ևս չէ հասկանում և որին այլ ևս չի վերադառնալու։

Ի՞նչու ուրեմն կամակորութեամբ պաշտպանել նրան։

Ցիրաւի ժամանակն է, որպէս և ասում է մեր Բուշերի թղթակիցը իր՝այս համարում տպուած թղթակցութեան մէջ։ «Ժամանակն է որ Հնդկաստանի, Ջաւայի և Նոր-Ջուղայի գրագէտներն էլ ջանալին մշակել և գործածական շինել առհասարակ՝ մաքուր աշխարհաբառը»։

Մեր ասածն էլ այդ է։ Ազատեցէք մեզ այն անճոռնի հայերէնից, որը միմիայն ծիծաղ է շարժում, այժմ անհասկանալի մնում և երբէք նշան չէ որ նրան գործածողը լաւ հայկաբան է, այլ որ նա հայերէն չը գիտէ և եթէ գիտէ էլ՝ պահպանողական մի տիրացու է որ չգիտէ ժամանակի ոգին և նրա պահանջները։

Խօսեցէք ժողովրդին հասկանալի լեզուով—ահա մեր պահանջը։ Կ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Հայկական ըէֆորմների ընդունուած ծրագիրը էականապէս բովանդակում է մայիսի 11-ի ծրագրի գլխաւոր կէտերը։ Փոփոխութիւն եղել է միայն նրանով, որ կառավարութիւնները ետ են առել վեթօի իրաւունքը նահանգապետների նշանակելու վերաբերմամբ։ Դրա փոխարէն նրանք իրաւունք են ստացել նշանակելու մի քրիստոնեայ բարձր կոմմիսար. այդ պաշտօնեան անուանվում է «մուաւին», որ նշանակում է քաղաքական կցորդ և ոչ մի անկախ իրաւունքների տէր չէ։ Վերահսկող յանձնաժողովը նոյնպէս մասամբ զրկվում է իւր իշխանութիւնից. նա իրաւունք պիտի ունենայ խորհուրդ հարցնելու և իր կարծիքները ներկայացնելու։

Ըէյտէր.

—Ռուսական գործակալութեան հեռագիրների համեմատ, Դիարբէքիրի վիլայէթում հայերը յարձակուել են պահնորդ զինուորների վրայ, սպանել են մի քանի մահմետական և այրել բազարը Լիւերիկում: Նոյն գործակալութիւնը յայտնում է որ Թիւրքական զեկուցումով ցոյց է դրուած, որ Բաղէշում սպանուել են 163 Թիւրք և Հալէպում մի քանի եւրոպացիներ:

—Բոլոր մեծ սլետութիւնները, Անգլիան, Ռուսիան, Իտալեան, Ֆրանսիան և Աւստրիան մարտանաւեր են ուղարկել Լեվանտ (Լեվանտ ծոց, Յունական ծովում) որից շատ մօտ է Եւրոպական Թիւրքիայի հողը: Բայց մինչ այդ կատարվում է, այն կողմ Հայաստանում բոլոր քրիստոնեաների դրութիւնը շատ վտանգաւոր է նկատվում: Մի սոսկալի կոտորած է տեղի ունեցել Խարբերդում ևս. կոտորել են 800 հոգի, այրել են ամերիկացոց շէնքը 15000 անգլ. լիրա արժողութեամբ և...—զարմանալի, սեղծական բան—երկու անգամ է որ միսիոնարները ազատվում են մէկը Երուսաղէմի մօտ եղած յարձակումից, միւսը Խարբերդի վայրենի կոտորածից: Միսիոնարների այս ազատուելը շատ բան է ասում:

—Եմենում արաբները ապստամբուել են 45000 արաբ, զինուած մարթինի հրացաններով, երեք ճակատամարտի մէջ ջարդ են տուել Թիւրքերին և պաշարել են նրանց Եմենի գլխաւոր քաղաք Սանայում: Իսկ Զէյթունի հայ ապստամբները գրաւել են տեղական բերդը, որի զօրքը իր զէնքերով միասին անձնատուր է եղել ապստամբներին:

—Կ. Պոլսի սեպտ, 17-ի ցոյցը ձեռնարկել են Հնչակեանները, իսկ իսկոյն յետոյ Դաշնակցականներն էլ բաց Թողնելով մի Թռուցիկ Թերթ, հրաւէր են կարդացել միանալու և շարունակելու ապստամբութիւնը:

—«Մշակը» Իզմիրից լուր է ստացել, որ Բայազիտում նոյնպէս սկսել են հայերին կոտորել. Թիւրքերի և քրդերի կոտորածից հազիւ մի քանի հայեր ազատուել են և փախել ռուսաց սահմանը: Այդ առիթով Ռէյտերի գործակալութիւնը յայտնում է, որ ցեղական և կրօնական շարժումը այն աստիճան ոյժ է ստացել Հայաստանում, որ առաջն առնել շատ դժուար է:

—«Daly News» անգլիական մեծ Թերթը Վէննայից ստացել է մի հեռագիր այսպէս բովանդակութեամբ: Ինչպէս լսվում է, Ռուսաստանը որոշել է իր զօրքով մտնել Հայաստան, հէնց որ բրիտանական նաւատորմը երևայ Բոսֆորի առաջ»:

ՄԻ ՊՏՈՑՏ ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ՄԷՋ

Ես չեմ խոստանում ընթերցողի հետ Ջուղայի ամեն ծակ ու ծուկը պտտել և նրան ծանօթացնել ժողովրդի սարք ու կարգի, նիստ ու կացի և վարք ու բարքի հետ. ես նրան միայն առաջնորդելու եմ մի քանի նշանաւոր հաստատութիւններ և մասամբ ծանօթացնելու եմ նրանց դրութեան հետ: Դիտենալու է որ 500 տուն հայերի մէջ շարժում և գործ խիստ շատ պակաս է. թէ երբ Ջուղայեցիք պիտի սթափեն իրենց մրափումից և տեսնեն իրենց թոյլ և թերի կողմերն և կեղտոտութիւններն և փութան մէկ ճար անելու—այդ դեռ հարց է, դրա համար դեռ երևի տարիներ են հարկաւոր:

Ընթերցողի հետ մտնենք փոքր ինչ Ջուղայի ամենանշանաւոր հիմնարկութեան մէջ, այդ է Ամենափրկչեան Վանքը, որի մէջ ապրել են մինչ այսօր բազմաթիւ վեղարաւորներ 1606 թուականից սկսեալ: Վանքի մէջ զերեզմանային լռութիւն է տիրում. միայն ծառաների աղմուկներն են որ խանգարում են այդ լռութիւնը: Ո՞ւր է գնացել այստեղ բազմող թեմական Եպսի եպիսկոպոսը: Նա գնացել հեռացել է Պարսից՝ ծոցից այն կողմն, Գանգեսի ափերը քիչ էլ զբաղելու Հնդկահայերի հետ: Ասում են որ մէկ ինչ որ Թովմաս էֆէնդու հետ բանակցութիւններ և վէճեր է բաց արել. երբեմն էլ լուր է պատում որ նա այնտեղից շուտով մեկնելու է Էջմիածին երթալու:

Խորհրդարանի անդամների թիւը լրացնում են երեք—չորս քահանաներ: Կանոնաւոր նիստեր կարելի է ունենալ. իսկ այս նիստերից հարցանելի է ինչ օգուտ է քաշել ժողովուրդը.—ոչինչ: Դիւղական դպրոցների հարցը կամ այլ ազգօգուտ հարցեր՝ ոչ մի նշանակութիւն չունին սրանց մօտ: Առաջարկիր նրանց այս ինչ կարևոր խնդիրը, պիտի պատասխանեն քեզ «շատ բարի. կաց չուր սրբազանին գրենք, հարցնենք և հրամանոց խրբար տանք». այսպէս, մեր խորհրդարանի ամեն շարժումը սրբազանի հրամանովն է կառավարվում: Թէ ինչ հարցերով են զբաղվում մեր սրբակրօն խորհրդարանի անդամներն՝ դիւրին է ենթադրել. նրանցից մէկն փայտահատութեան և լաւ գինի պատրաստելու կերպեր է համարում իր ընկերակիցներին՝ որոնց երկուսի մէջն էլ ինքն լաւ վարժ. է. երկրորդն էլ նկարագրում է թէ ինչպէս խելօքութիւն գործ դրեց որ երբ տեսաւ թէ պատկերահանութեան արհեստով լաւ չէր կարողանում ընտանիք կառավարել, քահանայացաւ և մի և նոյն ժամանակ սրբազանի թոյլտուութիւնը գտնելու բարերաղտութիւնն էլ ունեցաւ, որ իր նախկին արհեստովն դարձեալ շարունակի պարապել: Երրորդը էլ երկար և բարակ իր անցեալ կեանքիցն է պատմում, թէ որպէս Հնդկաստանում չը կարողացաւ աւարտել իր ուսման շրջանը, վերադարձաւ հայրենիք, հեռագրչութեան և դերձակութեան արհեստներն հեռագիտէ փորձեց սորվել, չը յաջողեց. սրանց մէկն էլ անընդունակ գտնելով հարիւր թուման տուաւ սրբազանին և քահանայութեան պաշտօնին հասաւ: Խորհրդարանի անդամներն այդպիսի խօսակցութեան նիւթերով են զբաղեցնում իրենց նիստերը:

Ընթերցողը արդէն բաջածանօթ է որ տարիներից ի վեր սոյն վանքում գործ է ածվում եղել մէկ մամուլ որի մէջ տպվում էր հարսանեաց հրաւիրաթուղթեր, վանքական հաշիւներ և այլն և այլն. այդ մեքենայն այլ ևս չէ գործում. էլ չէ լսվում նրա բազմատանջ անիւների ճռճռոցը:

Թողնենք այս տեղը գտնուած բազմաթիւ մրոտած խցիկները իրենց տեղերում և դուրս գալով մտնենք մի ուրիշ ազգապատկան հաստատութեան մէջ. այն է Կեդրոնական դպրոցը. Մուտքին կից գտնվում է դպրոցի գրավաճառանոցը որի մէջ տեսնվում են Նոր-Ջուղայի պատմութիւններ փտած և փոշոտած, Ազգասէր լրագիրներ (կազմած), Սաղմոսներ և Աւաղշարաթներ: Այստեսակ գրքերով Կեդրոնական գրավաճառանոցը շլացնում է այցելուի աչքերը: Անցնենք դպրոցը. ընծայարաշխութեան հանդ՝սի ժամանակն է. սրահի մէջ տեսնվում է կանանց, արանց և երեխայոց խուռն բազմութիւն, որոնց ճիչերից և աղաղակներից ունկնդիր հանդիսականի ականջներն են խլանում. Հանդէսը զուրկ է կարգապահութիւնից. հէնց այս բաբիլոնական խառնակութեան մէջ կատարվում է հանդիսի արարողութիւնը: Քահանաները աթոռակների վրայ բազմած են, ականաւոր կարծուած աղաներն էլ նրանց կարգում. ահա մէկ աշակերտ բարձրանում է և մէկ անկապ ճառ է արտասանում, մէկ ուրիշն հետևում է նրան և հայերէն լեզուով մի ուրիշ ճառ է խօսում, որի բուն նիւթն է գրաբառ լեզուն պախարակել. մէկէն ի մէկ կայնում է մէկ ակնոցաւոր երիտասարդ, որի խօսուածքից երևում է թէ դպրոցի գլխաւոր ուսուցիչն է. սկսում է իր անցեալ տարուան գործունէութիւնից երկար ու բարակ պատմել. թէ որպէս այս կարճ ժամանակամիջոցում իր շնորհիւ դպրոցը այս նախանձելի գրութեան մէջ ընկաւ. այնպէս որ կարողացաւ ազգին ընթացաւորտ աշակերտներ նուիրել (?) չը գիտեմ ինչ էր նշանակում նա կրկնելով և յետ կրկնելով թէ «ուրիշ տեղ այսպէս դպրոց չը կայ *) (ծիծաղ հանդիսականներից) բազմութեան զսռում զոչումներին չը դիմանալով դուրս գանք այս հանդիսավայրից, չը մոռանալով յիշել որ այս նախանձով վառուած աւագ ուսուցիչը մի քանի օրից յետոյ, խոյս տուեց ազգային ասպարիզից և գնաց ծառայելու մի ինչ որ եւրոպացի վաճառականի մօտ, մէկ քանի դրան աւելի ռոճիկ գտնելու յուսով:

Դառնանք այժմ օրիորդաց դպրոցին, որը զետեղուած է Կուսանաց վանքումը. թողնենք այստեղ բնակող «մաքրակենցաղները» իրենց խցիկներում ճոխ ապրելիս՝ և դառնանք դպրոցը: Զէնքը աննախանձելի գրութեան մէջ է. երկու երեք նեղ և մութ սենեակներում լինում են դասախօսութիւններ: Նոր-Ջուղայեցին իր աղջկանը ուսում տալու գաղափարն և փափագն չունի. ինչ օգուտ է, ասում է նա—աղջիկների համար այս ինչ այն ինչ ուսումը. նրան միայն բաւական է որ սեր սպիտակից կարողանայ ջոկել, յետոյ նրա պարաքն է որ տանը նստի իր կարը կարկտանի և տնական այլ և այլ գործերով պարապի մինչև բաղդը բացուի և կարգուի: Հէնց այս խաւարամիտ կարծիքին համաձայն, Օրիորդաց սոյն դպրոցումն պարզ ընթերցանութիւնից բացի էլ ուրիշ ուսմունք չէ մատակարարվում: Բայց այստեղ խոստովանելու է որ ձեռարուեստը շատ լաւ վիճակի մէջ է գտնվում դպրոցիս աշակերտուհիների մէջ: Ուրախալի երևոյթ է լսել որ այստեղ կառավարումէ «Որբուհեաց խնամակալութեան ընկերութիւն» անունով մէկ միութիւն, ունենալով բաւական գումար իրենց արկղումն. բայց թէ իրենց անուան համապատասխան ինչ գործերով են զբաղվում—ուրախ կը լինենք այդ մասին կարդալ Շաւիղ լրագրի սիւնեակներում:

Դուրս դանք Կուսանաց անապատիցը և քիչ էլ առաջ երթանք: Ընթերցողին կարծեմ ունախորժ չի թուիլ եթէ միքիչ էլ նրան պատցնեմ բողոքականաց կեդրոնումն—այստեղ է նրանց գրավաճառանոցը որի մէջ ծախվում է միայն կրօնական գրքեր. մի քիչ առաջ. սա նրանց հիւանդանոցն է ուր խնամակալվում են բազմաթիւ պարսիկ հիւանդներ: Միսիոնար բժիշկը ջանանում է սրանց մատակարարել թէ հոգևոր և թէ մարմնաւոր ճար. մի քիչ էլ առաջ—այստեղ է տղայոց դպրոցը. մանրամասնութիւնների մէջ չը մտնելով միայն այսքանս պիտի խղճմտանքօրէն խոստովանած, որ այդ դպրոցը գերադասելի է մեր ազգային դպրոցից: Անգլիացի միսիոնարն այս կէտումն միայն մեծ ծառայութիւն է արել Ջուղայեցի հայերին, ուսում է տուել և զարդացրել է բազմաթիւ երիտասարդների, որոնք արժանի են եղել բժիշկներ դառնալու, վաճառանոցներում և բանկերում մեծ պաշտօններ վարելու, և այլն և այլն:

Մէկ վերջին տեղ և մեր կարճ պտոյտն վերջացնենք. այդ է Ընթերցարանը. չը գիտեմ ինչ անունով կոչեմ սրան: Երբեմն կոչվում էր դա «Մեսրովբեան ընթերցասիրաց ընկերութիւն». մնաւ այդ անունը և յանկարծ բուսաւ «Բաֆֆիի ընթերցասիրաց ընկերութիւն», սա ևս քանի դեռ իր խանձարուրի մէջ էր գտնվում, անուանափոխութեան ենթարկեց: Ընթերցողի հետ մտնենք ընթերցարանի սրահն ընդհանուր ժողովի ժամանակը: Մէկ երկայնաձև սեղանի շուրջն խառնուած են քսանի չափ երիտասարդներ. նախագահում է Դոկտոր Աղանուրն. փոխ նախագահն է Ց, Կ. Ցորդանանեանը: Ժողովը բացվում է առաջարկվում է ընկերութեան անունը փոխել և կոչել Ուսումնասիրաց ընկերութիւն: Շատ լաւ կը լինի, բացականչում բժիշկ աթոռակալը.., ոչ, պատասխանում է անդամներից մի ուրիշը. մի ընկերութեան գործունէութիւնը իր անունից կախում չունի նոյն անունովն կը շարունակենք:—Լաւ ասում լաւ ասում, դարձեալ զոչում է նախագահը, յետոյ յանկարծ վեր է ելնում տեղիցը և գլխարկը վերցնելով ասում է.—պիտի ներէք ինձ, ես երթալու եմ այս ինչ Մստր....ի տեսութիւն.... Փոխ նախագահն է այժմ սկսում խօսել:—Պարոններ, ասում է նա, ամօթ է մեզ խաղալիք դառնանք. միանանք և գործենք, Բաֆֆիի անունից մարդիկ խրտնում են *) Ուրեմն անունը փոխենք և այդպէս մեր անդամների թիւն ստուարացնենք. աշխատենք գիւղօրէից մէջ դպրոցներ բաց անել, Նոր-Ջուղայի բարբառը զտելու համար մէկ Մաքրախօսական ընկերութիւն կազմենք մեր մէջ չքաւորաց օգնելու համար մէկ Աղքատասիրաց ընկերութիւն հաստատենք, մեր գումարներից խնայելու համար մէկ խնայողական ընկերութիւն հաստատենք. ամօթ է մեզ ետ մնալ Թէհրանի, Դավրէժի և Ռաշտի հայերից, միանանք և գործենք: Այս խօսքերով նա թնդացնում էր սրահը. միահամուռ հաւանութեամբ բոլորն էլ մեկեցան գործն յանձնելով գործադիր անդամներին: Մէկ երկրորդ անգամ մրտնենք այս սրահը. սեղանի վրայ դրուած է նախագահի, փոխ նախագահի, քարտուղարի և

*) Դուցէ ուզում էր ասել թէ ուրիշ տեղ այդպէս վատ դպրոց չը կայ: Ծ. Խ

*) Տարօրինակ է. ինչ կայ խրտնելու այդ անունից, չէ՞ կարելի սպահանցի էֆէնդիներից իմանալ. խրտնելու ոչինչ չը կայ, միայն պիտի աշխատել, Թէհրանցի բաֆֆիականների պէս չը պղծել այդ հայ գրողի յիշատակը:
Ծ. Խ.

այլների հրաժարականները (!!!). մէկ երրորդ անգամ մտնենք այնտեղ Հայաստանի այժմեան վիճակի մասին լրագրներում մէկ քան կարդալու, և հակառակ մեր ակնկալութեանը սեղանի վրայ գտնում ենք մի քանի հինացած Շաւիղ և փոշոտած Մշակներ և մի քանի էլ ցանցառ անգլիական լրագրեր. ընթերցարանի ծառային էլ խոր քնի մէջ։ Ահա ձեզ մէկ նմոյշ Ջուղայի մեռած երիտասարդութիւնից։ Ամօթ չէ՞ մեր Ջուղայի երիտասարդներին որոնք մէկ չնչին ընթերցարան հիմնելու միութիւնը և ոյժը անգամ չեն կարողանում ստեղծել իրենց մէջ։

Դէտ.

ՆԱՄԱԿ ԲՈՒՇԵՐԻՑ

—

19 Հոկտ. 95

«Շաւիղ» № 33-ի գրախօսութեան յօդուածում Բաթավիոյ հայ ազգային հաստատութեանց տարեկան տեղեկագիրը կարդալով, շտապում եմ ուղարկել խմբագրութեանդ մի օրինակ «Սահմանադրութեան և կարգադրութեան ժողովրդեան հայոց որի Ջաւա» թարգմանած հոլլանդերէն բնագրէն և տպագրած ի Նոր-Ջուղա 1881 թուականին։*) Նրա թարգմանիչը պ. Խաչիկ Աբրահամ Թովմասն, այնտեղի համբաւաւոր հայ գրագէտների մէկն է. խրթին ոճին և գրաբառ լեզուին սիրահար։ Հանգուցեալ պ. Աղանուր Պետրոս Աղանուրն ևս որ վկայել է թարգմանութիւնը որպէս ուղիղ թարգմանած հոլլանդերէն բնագրից—նմանապէս գրաբառին լաւ հմուտ էր. բայց որպէս երևում է որ երկուքն ևս կարծես ջանացել են բառական թարգմանութեամբ և այն ևս խրթին և մթին ոճով գոհ լինել, քան թարգմանել այդպէս մի պիտանի տետրակ պարզ և դիւրըմբռնելի ոճով. գոնէ Աւետարանի ոճով պարզ՝ թէև գրաբար։ Յիրաւի ժամանակ է որ Հնդկաստանի, Ջաւայի և Նոր-Ջուղայի գրագէտները ջանային մշակել և գործածական շինել առ հասարակ մաքուր աշխարհաբառը։ Աշխարհաբառ գրել ոմանք կարծում են թէ ստիպւած են գաւառական ոճով գրել և կամ իրենց տեղական սովորութեան համեմատ՝ այլ ազգի բառերով և աղաւաղեալ ոճով գրուածքը լցնել։ Կան թէ Նոր-Ջուղայում և թէ Հնդկաստանում մի քանի հայագէտներ, որոնք կարող են յօդուածներ էլ գրել քերականական կանոնների համեմատ, բայց աշխարհաբառ ոչ, այլ գրաբառ։ Տաս տարի առաջ. Նոր-Ջուղայի հայոց լեզուի ուսուցիչներն և քերականագէտները ոչ թէ միայն խոլշում էին աշխարհաբառից այլ և ծաղրում էին նրան. բայց մխիթարական է այժմ տեսնել որ նոր աշխարհաբառ գրականութեան և մամուլի շնորհիւ վերջանում է այդ ծաղրը և բոլոր մեր փոքր ի շատէ հայագէտները սկսում են գրել աշխարհաբառով, որպէս պահանջում է ժամանակակից գրականութիւնը։ Յուսալի է որ Բաթաւիոյ մեր պատուելի համազգայինք ևս նոյն ձրինակին հետևելով այսուհետև իրենց տեղեկագրերը դիւրըմբռնելի, պարզ աշխարհաբառ լեզուով գրեն, որպէսզի հասկանալի լինի ոչ թէ միայն իրենց, այլ և բոլոր հայերին։

Գալով հաշուեցուցակի վրայ «Բրիչ»ի դիտողութիւններին, պատիւ չէ բերում Բաթավիոյ հայերին, եթէ՝ այդպէս է ինչպէս յայտնում է յօդուածագիրը։ Ջաւայի հայերը, որոց շատերին ճանաչում եմ անձամբ, վաճառական են և և հմուտ հաշուագէտներ ըստ նոր ձևի որ կոչւում է «կրկնատոմար»։ Անհասկանալի է երևում ձեզ նրանց հաշուեցուցակը. անշուշտ Բաթավիայից շուտով բացատրութիւն կստանաք։ Հաստատեմ որ իմ բարեկամ պ. Գասպար Տէր Գէորգեանն որ այնտեղի Հայկեան միաբանութեան առենադպիրն է, կբարեհաճի փութով պարզ և մաքուր աշխարհաբառով հարկաւոր տեղեկութիւններ հաղորդել թերթիդ, այնտեղի ազգային հաստատութիւնների և կալւածների վերաբերութեամբ, որպէս և նրանց եկամուտների և ծախքերի մասին։ Յոյս ունիմ ուղարկածս տետրակը ձեզ հարցուփորձի և խորհրդածութեան նիւթ կմատակարարի։

Կ. Յ. Զէյթունեան.

ՆԱՄԱԿ ՌԱՇՏԻՑ

—

30 Հոկտ. 95

Հետևեալ նամակը ուղարկել եմ Թիֆլիզի «Ծարաղ» շաբաթաթերթին տպագրելու. խնդրում եմ բարի լինէք դուք էլ տպագրէք, քանի որ ձեր թերթը շատ է տարածւած այստեղ։ «Ձեր թերթի 38 համարում տպագրւած Ռաշտի նամակը կարդացի։ Դժւար է ինձ լրագրական ասպարէզ մտնել տեղոյս ազգայնոց կնճռոտ խնդիրների վերաբերմամբ, սակայն ձեր տպագրած նամակում, ի միջի այլ շաղակրատութիւնների, այն կէտը որ վերաբերում է քաղաքիս աւետարանականաց վարժարանին, պարտաւորեցնում է ինձ հրապարակ գալ յանուն ճշմարտութեան, հերքել այն մեծ սուտը որ յօդուածագիրը առանց տեղեկանալու բողոքականաց վարժարանի ծրագրին, համարձակւել է ափղցփեղ խօսքերով հասարակութեան սիրտը պղտորել որպէս թէ ազգային դպրոցական վերջին խառնակութեան ժամանակ բողոքական քարոզիչների համար լայն ասպարէզ է բացւել որով պղտոր ջրում ձուկ են որում. նամանաւանդ ծիծաղելի է այն կէտը, որ յօդուածագիրը նկարագրում է բողոքականաց ուսումնարանը ասելով. «աշակերտներ, աշակերտուհիներ և պարսիկ աշակերտներ, մի սեղանի վերայ նստած իրենց առօրեայ դասերը սորվում են». դա զրպարտութիւն է։

Հայ աւետարանական ժողովուրդը վաղուց է որ տեղումս ունի մի ուսումնարան, բայց ոչ քարոզիչ մինչդեռ պ. յօդուածագիրը յիշում է քարոզիչ բառը։ Մասնաւորապէս չորս տարի է որ այդ վարժարանը միանգամայն գործում է պարսիկ երեխայոց մտաւոր և բարոյական զարգացմանը, բայց ցաւում եմ ասելն որ այս տարի տեղոյս ազգայնոց մէջ մի սարսափելի երկպառակութիւն տեղի ունեցաւ որի բացատրութիւնը ինձ չէ վերաբերում Որովհետև միշտ չէզօք ու անտարբեր գտնւած եմ այդպիսի խառնուճաղանճ խնդիրներում։

Այդ խառնակութեանց պատճառով, երեխաները մնացին առանց դաստիարակութեան. նորանցից ոմանք իրենց ծնողաց խնդրանօք ընդունւեցին մեր դպրոցը. վարչութիւնը գթալով այն թափառաշրջիկ ուսման ծարաւ երեխայոց վերայ, յանուն քրիստոսի և ի սէր ազգութեան, միևնոյն ժամանակ յիշելով աւետարանի այն պատւէրը «թէ առաջ հրէից, հապա յունաց» վասնորոյ դրպրոցը կորցրեց թոշակատու պարսիկ աշակերտները ընդունելով հայերին ձրի. այդ բանը արաւ նա յանուն հայութեան։

Իսկ ինչ վերաբերում է միւս խնդրին դա կատարելապէս լիրը սուտ է. աշակերտներ և աշակերտուհիներ ևս մնում են առանձին առանձին սենեակներում. (աշակերտաց մեծը 12 տարեկան իսկ աշակերտուհեաց 8 տարեկան է) իսկ պարսիկ ոչ մի աշակերտ չկայ. նորանք գնացին այն ժամանակ երբ հայեր ընդունւեցան. միայն պարսկերէնի դասատուն օրական մի քանի ժամ գալիս է տղայոց դասերի համար։

Ահա ամբողջ իրողութիւն. այժմ թող ամաչի յօդուածագիրը իր ստերի համար։

Ուսուցիչ Ռաշտի բող. դպրոցի

Մ. Յ. Հացագործեան,

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թէհրան 6 Նոյ, 95

Շաւիղ № 40-ի մէջ տպագրւած է պ. Ռաֆայէլ Թադէոսեանի մի յայտարարութիւնը Թէհրանի Հայուհեաց կոչւող ընկերութեան օրիորդաց դպրոցի վարժուհիների մասին։ Յայտարարողը յայտնում է որ մայր և աղջիկ բաղդադցի հայեր են և այլն։ Մենք զարմանում ենք այդ դպրոցի ղեկավարների անմտութեան և խորին տգիտութեան վրայ, որ համարձակվել են մատաղ աղջիկների յանձնել մի այդպիսի մայի և աղջկայ ձեռքը։ Չէ՞ որ այդ «մայրը» մի ոչ ախորժելի պատմութիւն է իր հետը բերել Սպահանից, իսկ աղջիկը հազիւ 6 ամիս միայն եղել է բողոք. դպրոցը. մի դպրոց որից աւարտածը անընդունակ է անգամ վարժուհութիւն անելու, ինչ մնաց կիսատ թողնողը։

Բացի դրանից եթէ այդ դպրոցը Հայկազ. օրիոր. դպրոցի «աջրդի» համար է բացւած, ինչպէս որ Հայկական դպրոցը Հայկազեան դպրոցի աջրդին—ինչով են կամենում մրցել. իրենց այդ տեսակ վարժուհիներով. չէ՞ որ եթէ այդպէս վարժուհիների յանձնել կարելի լինէր մեր աղջիկներին, էլ հարկ չը կար նեղութիւն կրել և Ռուսաստանից մեր ներկայ Հայկազ. դպրոցի վարժուհին բերել տալ։ Մի խոսքով մարդ ապշում է այդ Հայոյեաց ընկերութեան և առ հասարակ Դովլաթայ թաղի կրթական գործերը ղեկավարող անձերի լրբութեան վրայ, որ անպատիժ կերպով ամեն տեսակ խայտառակութիւնների խաղալիք են դարձնում մեր որդիների ուսման գործը։ Էլ ինչու համար է ուրեմն քաղաքումս նստող փոխանորդ հայրը. եթէ այդպիսի ակներև խայտառակութիւնների վրայ ուշադրութիւն չէ դարձնում. ինչու՞ մի անգամ չէ պահանջում գիտենալ թէ ովքեր են և կամ ուսման ինչ ցենզ ունին Դովլաթի թաղի Դասպարեանն ու Բժշկեանը, Մայր վարժուհին ու աղջիկ վարժուհին։

Հրաւիրում ենք փոխանորդ հօր ուշադրութիւնը. բաւական է ինչ լուց և թոյլ տուց որ մեր որդիների կրթութեան գործը խայտառակութիւն չինեն զանազան բաղտախնդիրներ ու ապիկարներ։

Մի Դովլաթաթաղեցի.

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

—

«Պատմութիւն Բագուայ հայոց աղքատախնամ եկեղ. հոգաբարձութեան» 1872—1893։ Կազմեց Ա. Դալստեան. Բագու. գինն է 25 կ. Ծախվում է յօգուտ աղքատանոցի

—

Այս գրքի մասին երկար չէ խօսելիքս։ Դա մի հաշուետուութիւն է. շատ կանոնաւոր, գոհացուցիչ և հասկանալի, ինչ որ երբէք չեն եղել Ջուղայի վանքի կամ Բաթաւիոյ հաստատութիւնների հաշիւները։ Մեր առջև դրւած տեղեկագրի մէջ շատ հասկանալի լեզուով պատմւած է Բագուի աղքատախնամ ընկերութեան սկզբնապատճառը, որը 1872 թւին Բագու գաղթած Պարսկահայ աղքատներն են եղել։ Հաւաքել է նրանց, նաև Զամախու երկրաշարժից վնասւած և Բագու եկող թշուառների համար՝ մի որոշ գումար, որով օգնել են բոլորին, գործի դրել և կամ խնամել մինչև իրենց երկիրը վերադառնալը։ Սովը անցնելուց յետոյ, ճանապարհ են դրել գաղթողներին և գանձապահ պ. Դ. Դիլդարեանի մօտ մնացած 468. ր. 57 կ. փողը գործածելու, այլև զենեբալ Լազրէվի առաջարկութեան հիման վրայ—կազմել է Աղքատասիրաց ընկերութիւնը։ Այդ ընկերութիւնը 1873 թւից ի վեր սկսում է գործել։ Որքան հեշտութեամբ թւերով կարելի է լինում իսկոյն և եթ գաղափար կազմել ընկերութեան 21 ամեայ գործունէութեան մասին։ Բացի կանոնաւոր մանրամասն հաշուից վերջումը տրւած է մի հաշուեկշիռ այսպէս։

«Վերոյիշեալ հաշիւներից կարելի է նկատել, որ աղքատախնամ եկ. հոգ. իր 21 տարւայ գործունէութեան ընթացքում ստացել է եկամուտ այլ և այլ աղբիւրներից ընդամենը 31,381 ռուբ. 91 կոպ.

Յետոյ թւած է թէ որպիսի հասոյթներից են գոյացել այդ գումարները։ Հետաքրքիր է տեսնել, որ Ծննդեան և Զատկի տօների այցելութիւններից գոյացել է 3868, 95. զանազան մարդիկ մեռնելիս կտակներ են արել 1232, 11. իսկ հոգեբաժինները փոխանակ զանազան տէրտէրների և եկեղեցիների կամ վանքերի ուտեցնելու, տւել են աղքատների՝ 7956 ր. 90 կ. փող։ Դեռ չեմ յիշում որ ընկերութիւնը օգտւել է նւէրներից էլ 8109 ր. 20 կ.։

Ծախսն էլ յայտնի է նոյնքան պարզութեամբ, որովհետև այսպիսի մի պարզ հաշուեկշիռ կայ։

«Հոգաբարձութիւնը 21 տարւայ ընթացքում ծախսել է 31705 ր. 8 կ. այսպէս։

Օժանդակութիւն աղքատների—10379 ր. 65 կ. Աղքատ ննջեցեալների թաղման՝ 447 ր.

---

*) Այդ «Ջաւայի ժողովրդեան սահմանադրութիւն» կոչւող գրքոյկի մասին կը խօսենք յետոյ

Ծ. Խ.

24 կ. Ընդամենը աղջկանց պահելու համար նը-պաստ 168 ր. բանդարկեալներին ծննդեան և զատկի տոներին—111 ր. 50 կ. Դպրոցների աղքատ աշակերտների նպաստ և դասական պիտոյք—301 ր. 76 կ. Տպագրական և ծառայի ծախս—166 ր. 81 կ. իսկ աղքատանոցի շինութեան վրայ և ծախսած 19632 ր. 87 կ. որովհետև այդ խնամակալութիւնը ունի աղքատանոցի մի շէնք ուր պատսպարվում են խեղճ հայ անտուն կամ պանդուխտ աղքատներ ու ընտանիքներ։

Շէնքը կամարակապ է և կառուցած ամուր սրբատաշ քարերից, բաղկացած է 25 մեծ ու փոքր սենեակներից և մի մեծ դահլիճից, ունի լուացարան, խոհանոց, հացթխելու տեղ և 3 ջրհոր։ 1888 թուին բնակվել են այդտեղ 16 ընտանիք, 1892-ին 33 ընտանիք, իսկ այս տարի կենում են 32 ընտանիք՝ թիով 128 հոգի. այդ աղքատները, բացի բնակարանից և մասնաւոր նպաստներից, ուրիշ ոչինչ չեն ստանում և ապրում են գործելով։

Ահա մի համակրելի ընկերութիւն և համակրելի շէնք, որի հաշիւն է որ շատ պարզ, հասկանալի կերպով պարզում է մեր առջև տեղեկագիրը։

Այս գիրքը թերթելիս, միտքս ընկաւ որ Սպահանումն էլ կայ մի այդպիսի բան. դիմեցի Նսայի եպ. հրատարակած տեղեկագրին և ուզեցի մի համեմատութիւն անել։ Այնտեղ միայն երևում է մի տարւայ հաշիւը, բայց թէ ինչ արկղ է դա, ինչ է դրա սկիզբը և այլն ոչինչ չը կայ. կամ ունի գումարներ, կտակներ, կալւածներ և այլն—ոչինչ յայտնի չէ. միայն թէ երևում է որ Նսայի եպիսկոպոսին յաջողւել է այդքանը հաշիւ անել։

Նոր-Ջուղայի «Աղքատախնամ արկղը» մուտք է ունեցել 1894-ին 7577 ղ. 3 շ։ Հասոյթների մէջ 1402 ղ. 10 շ. Հնդկաստանից է եկել, 4638-ը՝ Բաթաւեայից, 1150-ը կտակներից, 200-ը՝ ածուխ ծախելուց, մուրհակով պահանջած՝ 150 և տէրութիւնից՝ 60 ղուան..,. Ընթերցողը չէ զարմանում ուրեմն որ ոչ մի նէր չէ գտնում իրենց Ջուղայեցոց կողմից, կամ նպաստ կամ օգնութիւն. մինչ 1891 թուին միայն Բագուի աղքատաց արկղը նէրներից—հոգէբաժին է ստացել 2525 ռուբլի. այսինքն, ռուբլին 5 ղուանով հաշուած՝ 11615 ղ., գրեթէ երկու անգամ աւելի քան Ջուղայի իր սեփական փողերից ձեռք բերած տոկոսները։ 2ԵՆ ամաչել Ջուղայեցիք այս համեմատութիւնից... չեն ամաչում որ իրենց աղքատները իրենք խնամել չը գիտեն և մինչև իսկ նրանց արկղից 1872-ին փող են պարտք առնում և մինչև 1895 թիւը ոչինչ վճարած չեն լինում... Որքան կարմրելու և խայտառակ լինելու քաջագործութիւններ են ունեցել այդ Նոր-Ջուղայեցի աղաներն ու աղքատաց արկղին տասնեակ տարիներից ի վեր պարտք ունեցող Տէր-Կարապետ Յորդանանեանները... Բագուի աղքատախնամ հոգաբարձութեան հաշուետուութիւնը կամ աւելի ճիշտն ասել տեղեկագիրը մի նմոյշ թող ծառայի մեր Սպահանի և Բաթաւիոյ հաշուետուներին. այլ և թող օրինակ լինի թէ որպիսի սրբութեամբ գիտեն վարել կովկասցիք իրենց հասարակական հիմնարկութիւնների հետ, մինչ մեզ մօտ՝ պարսկահայերի մէջ այդպիսի հիմնարկութիւնները կողոպտելը, նրա դրամները կլանելը այնքան սովորական է դարձել, որ ոչ ոքի չէ յուզում և կամաց կամաց էլ բարոյական օրէնք դառնալ է սպառնում....

Բրիչ.

(Վ.Ֆ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Զանազան կեղտոտ դաւեր են սկսել լարել պարսկահայ հասարակութիւնների դէմ այս օրերս։ Թէհրանի հասարակութեան մասին սուտ ամբաստանութիւն է եղել պարսկական կառավարութեան, բայց բարեբաղտաբար, շնորհիւ այժմեան խելօք և լուսամիտ Ն. Վ. Սադրազամին, այդ ամբաստանութիւնը հերքւել է։ Մենք զարմանում ենք այդ ամբաստանութիւնը անողների անմտութեան վրայ, քանի որ պարսկահայը բոլորովին ապահով ու ազատ է զգում իրեն Ն. Կ. Վեհ. Շահի և Ն. Վ. Սադրազամի հովանաւորութիւնը վայելելով և որ կողմնակի դաւերը չեն կարող խաղտել մեր ունեցած երախտագիտական զգացմունքները դէպի պարսկական Վեհապետը և նրա Ն. Վ. Նախարարապետը։

—

Մենք անցեալ համարով աւել էինք որ տեղիս փոխ. հայրը—որպէս մեզ հաղորդել էին—իբր թէ արգիլել է գումարումներ անել երեկոյթ կամ ներկայացումներ տալու համար։ Այժմ հայր սուրբը մեզ իմաց է տալիս, որ մեզ հաղորդած այդ լուրը հիմնովին սուտ է և որ նա ոչնչով արգելք չէ եղել և չի լինիլ գումարումներ անելու Պարսկաստանի պէս մի ազատ երկրում։ Ուրեմն Թէհրանի ծոյլ երիտասարդները աւելի լաւ կանեն որ էլ չը դիմեն այդպիսի ստոյգ միջոցների, իրենց անշարժութիւնը արդարացնելու համար։

—

Եղբ. Թումանեանց գործակալը Թէհրանում, մեզ իմաց է տալիս որ սովեալների օգտին հաւաքած միւս 50 լիրան այս շաբաթ կուղարկւի Ս. Պատրիարքին։ Այդ առիթով յայտնում է որ շնորհակալութեամբ ստացել է Համադանից, պ. Կարապետ Զօրաբ տէր Յովհաննէսեան-ից, յօգուտ Սասունի սովեալների 25 թուման։ Լաւ կը լինէր որ ուրիշ քաղաքներից ևս օրինակ առնէին պ. Տէր Յովհաննիսեանից։

—

Լսում ենք որ Թէհրանի հայ հասարակութիւնը շնորհակալութեան բազմաստորագիր մի ուղերձ է ներկայացնել Ն. Բարձ. Սադրազամի միջոցաւ առ Ն. Կայսերական Վեհափառութիւն Շահը, այն հոգածութեան և անաչառ կառավարութեան համար որ Նորին Կայսերական Վեհափառութիւնը ցոյց է տուել և տալիս է դէպի իր հայ հպատակները։ Այս էլ մի ապացոյց է որ հայերը միշտ երախտագիտութիւն են ցոյց տալիս դէպի այն կառավարութիւնները, որոնք գիտեն իրենց հպատակների հետ արդարութեամբ վարուել։ Նոյնպէս լսում ենք որ այլ քաղաքներից էլ այդ մտքով ուղերձներ են ներկայացուել առ Վեհ. Շահի կառավարութիւնը։

—

Ռէյտէրի գործակալութեան մի հեռագիրը հաղորդում է որ հայոց Էջմիածնի կաթուղիկոսը մի յիշատակագիր է գրել Կ. Պոլսի ռուսաց գեսպան Նելիդովին և որ վերջինս պատասխանելով հայոց կաթուղիկոսին ասում է թէ հայերն են մեծ մասամբ գրգռել այն կռիւները, որոնց հետևանքը եղաւ քրիստոնեաների սոսկալի կոտորածը։ Նա խորհուրդ է տալիս հայերին «բաց թողնել այն ունայն յոյսը թէ Եւրոպայի միջամտութիւնն պիտի գործակցէ իրերի մի նոր դրութիւն ստեղծելու համար»։ Կ. Պոլսի ռուսաց դեսպանի «պաշտօնական» պատասխանից վրդովւելու հարկ չը կայ։ Եթէ ճիշտ է հայոց վ. կաթուղիկոսի այդ դիմումը մի դեսպանի (որ անհաւատալի է) այն ժամանակ մնում է ենթադրել որ վեհափառը հասցէնէրի մէջ սխալւել է։

—

Ամենայն հայոց կաթուղիկոսի կեանքի դէմ սպանութեան փորձ է արւել։ Ռուսաց «Южный край» թերթն է որ պատմում է այսպէս. «Էջմիածնի հայոց կաթուղիկոսի դէմ եղած անբաւականութիւնը արտայայտվում է ի միջի այլոց նրանով, որ փորձ է եղել սպանել նրան։ Թէև պաշտօնապէս չէն յայտնում այդ լուրը, սակայն կաթուղիկոսին մօտ մարդիկ պատմել են և սինոդի անդամներից մի քանիսն էլ հաստատում են որ բռնել են սպանել ուզողին, որը մօտեցել է Կաթուղիկոսին, իբր թէ օրհնութիւն ստանալու և ուզել է խփել։ Բռնուողը յայտնել է որ միայն ինքը չէ այդ մտադրութիւնը ունեցողը և որ իրեն գաղափարակիցներ էլ կան»։

—

Ռաշտից մեզ գրում են որ Թումանեանցներից մէկը խոստացել է օրիորդաց դպրոց կառուցանել այնտեղ։ Մենք խորհուրդ կը տանք Թումանեանցներին որ փոխանակ նորանոր շէնքեր և հաստատութիւններ կառուցանելու. քիչ էլ մտածէին ապահովեցնել եղածները կամ մի ֆոնդով և կամ կալւածներով։ Օրինակ հէնց Ռաշտի երկսեռ դպրոցը։ Բաւական է քանի մեր բոլոր դպրոցները իրենց նիւթական միջոցը մեծ մասամբ հայթայթում են մուրացկանութեան ձևով ժողոված հանգանակութիւններից։ Թող հարուստները կալւածներով ապահովեցնեն նրանց, փոխանակ նորանոր—շատ անգամ աւելորդ—շէնքեր շինելով։

—

Մեզ գրում են Մարաղայից, որ այնտեղի խալֆա-ֆալչի Յոնան վարժապետի ամուսնութեան համար, հոգաբարձուները եկեղեցու փողից նւիրում են, որպէսզի հանդէսը շքեղ անեն քանի որ «ազգային վարժապետ է»... Այդ էր պակաս. դպրոցի փողերով հարսանիք են անում. օրինակելի հոգաբարձուներ!։

—

Գայթակղեցուցիչ լուրեր են հասնում նոյն տեղից նոյն Յոնան վարժապետի մասին։ Փորձանք է դարձել Մարաղայի գլխին։ Ի՞նչու համար է ուրեմն լռել Դավրէժի առաջնորդական փոխանորդը և չէ վռնտում Մարաղայից այդ շառլատանին։ Ակդարարում ենք առաջ. տեղապահին յիշել իր պատասխանատուութիւնը այն ծանր հետևանքի մասին, որ կարող է առաջ գալ Մարաղայի հայերի մէջ. մեզ գալիս են բազմաթիւ նամակներ, որոնք յայտնում են մի սկսող խռովութեան մասին։ Մենք սպասում ենք մեր թղթակցի տեղեկութիւններին։

—

Ն.յ. 1-ի՝ կատարած Վիէննայի Մխիթ. միաբանութեան աբբահօր Ս. Սէն եպ. Այդնեանի 50 ամեայ յոբելեանի առթիւ, միաբանութիւնը հրատարակել է յոբելեարի կենսագրութիւնը «Կենսագրական ակնարկ» վերնագրով, գրած Հ. Գաբրիէլ Վ. Մէնէվիշեանի։ Ստացանք նաև աբբահօր մեծ պատկերը շատ շքեղ տպած։ Համակրութեան արժանի է այդ գիտնական և աշխատասէր հօր յոբելեանի տօնախմբութիւնը։ Խմբագրութիւնս յայտնում է իր շնորհաւորութիւնը և համակրութիւնը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՐԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

—

Լոնդոն. 14. Աւստրիան մարտանաւեր է ուղարկում Լեվանտ։

Ս. Պետերբուրգ. 14 նոյ. Հինգ ռուսական մարտանաւեր հրաման են ստացել անմիջապէս երթալ Լեվանտ։

Կ. Պոլիս. 15 Միացեալ նահանգների մի նաւատորմ հրաման է ստացել գնալու Լեվանտ։

«Թայմզը» իր Կ. Պոլիս մասնաւոր թղթակցից ստացած հեռագրի համաձայն յայտնում է, որ թիւրքերը պատերազմի պատրաստութիւն են տեսնում. նոքա կրկնապատկել են Դարդանելի պահապան զօրքը և զօրեղացրել մուտքի վրայի հսկողութիւնը։

Արժէթղթերը մի քառորդ ևս ընկել են։

Ուրբաթ օրւանից ի վեր եղել է $^3/_4$ անկում։

Արտօնատէր հրատարակիչ՝

ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս կիւրակի օրից սկսեալ (նոյ. 11) եօթ շաբաթ շարունակ, հայ աւետարանական եկեղեցոյ քարոզութիւնների բնաբանը լինելու է «Սէր ընդ մէջ մեր»։ Յայտարարվում է որ ցանկացողները կարող են գալ լսելու այդ քարոզները որոնք կը սկսեն առաւօտեան ժամը 9-ից (ըստ եւրոպական)։

Քարոզիչ Միհրան Դամբուրաջեան.

1—3

Յայտարարվում է որ մտադրութիւն կայ Ս. Գէորգ եկեղեցւոյ համար կազմակերպել մի կանոնաւոր երգեցիկ խումբ. այդ պատճառով խմբին մասնակցել կամեցող ձայն ունեցող երիտասարդները հրաւիրվում են առաջիկայ երկուշաբթի, երեկոյեան ժամը 5-ին, ներկայ գտնուել փոխանորդ հօր մօտ։

1—1